ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.01.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/04

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Իրատես» ՍՊԸ-ի տնօրեն Է. Հայրապետյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 03Ա962167),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.01.2022թ. թիվ 26/26-1/21689-2021 գրությամբ «Իրատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 28.12.2021թ. թիվ 1/18-2/83976-2021 գրության հիման վրա,

04.01.2022թ. թիվ 26/26-1/21689-2021 գրությամբ նախաձեռնել է «Իրատես» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Իրատես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Իրատես» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալ առարկությունը.

«ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից, ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Վազգեն Հարությունյանին ուղղված գրությունը՝ «Իրատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անհիմն է /ներկայացված նյութերում առկա չեն բավարար հիմքեր/ և վարչական վարույթը ենթակա է կարճման , դրա հիմքերի բացակայության վերաբերյալ գրավոր եզրակացության հիման վրա, հետևյալ հիմնավորմամբ՝

Այսպես. ըստ ժամանակագրության հանձնաժողովի գործողությունները՝ /ընդունված որոշումները/ ՀՀՊԵԿ - ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի/ այսուհետ՝ հանձնաժողով / 14 դեկտեմբերի 2021թ N 2 արձանագրության համաձայն հանձնաժողովը որոշել է

1/ Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝ /ի թիվս այլ թվով 10 մասնակիցների/

9. «Իրատես» ՍՊԸ

Միևնույն ժամանակ նույն արձանագրային որոշմամբ հանձնաժողովը՝

2/Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը կասեցնել 6 աշխատանքային օրով և այն վերսկսել սույն թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 12:30-ին…:

ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի / այսուհետ՝ հանձնաժողով/ 23 դեկտեմբերի 2021թ N 3 արձանագրության համաձայն հանձնաժողովը որոշել է

2/Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին՝

գ/«Իրատես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.2-ը

Միևնույն ժամանակ նույն արձանագրային որոշմամբ հանձնաժողովը՝

Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել <<Իրատես>> ՍՊԸ-ին և այլ մասնակիցների մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը:

Այնուհետև ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ հանձնաժողով/ 23 դեկտեմբերի 2021թ N 4 արձանագրության համաձայն հանձնաժողովը որոշել է

1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները բացառությամբ «Իրատես» ՍՊԸ-ի:

Վերը նշված որոշումների /2,3,4/ վերլուծությունից ակնհայտ է , որ հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ և հանգել է սխալ որոշման այն պայմաններում , երբ վերը նշված ծածկագրով հայտը, գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Իրատես» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 14/12/2021թ պատշաճ կերպով, ներառյալ Հավելված 1.2-ը: Մինչդեռ հանձաժողովը ոչ միայն չի կատարել ներկայացված հայտելի ամբողջական ուսումնասիրություն, այլև սխալ է գնահատել ներկայացված հայտը և զրկել «Իրատես» ՍՊԸ-ին գնման հետագա և վճռական փուլին մասնակցելու հնարավորությունից /գների իջեցման բանակցություններ/ այդ կերպ սահմանփակել մասնակցի իրավունքը:

Վերոգրյալների հաշվառմամբ գտնում եմ, որ հանձնաժողովի կայացրած որոշումները «Իրատես» ՍՊԸ-ի մասով ոչ իրավաչափ են, զուրկ են ինչպես իրավական, այնպես էլ փաստական հիմնավորումներից , իսկ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից, ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակում ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Վազգեն Հարությունյանին ուղղված գրությունը՝ անհիմն և առարկայազուրկ:

ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման ներքոհիշյալ կետի համաձայն XXI. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

122. Լիազոր մարմնի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու նպատակով գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դիմում է կենտրոնին՝ առաջարկելով ուսումնասիրել ներկայացված նյութերը և հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց: Ընդ որում, մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար պատվիրատուն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի հայտնաբերման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ կից ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը: Նշված փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունար դիմում է կենտրոնին:

(122-րդ կետը լրաց. 03.12.15 N 1427-Ն)

122.1. Կենտրոնը սույն կարգի 122-րդ կետով նախատեսված նյութերի ուսումնասիրման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գրությունն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ ծանուցում է տվյալ մասնակցին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև պատվիրատուին՝ առաջարկելով ծանուցումն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել ներկայացված նյութերի վերաբերյալ կարծիք և (կամ) հիմնավորող փաստաթղթեր: Ընդ որում, եթե մասնակցի և (կամ) պատվիրատուի կողմից կենտրոն է ներկայացվել էլեկտրոնային փոստի հասցե, ապա կենտրոնը ծանուցումը կարող է ներկայացնել նշված հասցեով: Այդ եղանակով ներկայացված ծանուցման հաստատումը երկու աշխատանքային օրվա ընթացքում չստանալու դեպքում կենտրոնը պարտավոր է ծանուցումն ուղարկել թղթային տարբերակով: Թղթային տարբերակով ծանուցման (գրության տրամադրման) դեպքում ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, կամ մասնակցին հանձնվում է առձեռն՝ մասնակցի

(կազմակերպության) անունից հանդես գալու լիազորությամբ օժտված անձի ստորագրությամբ՝ նշելով վերջինիս կողմից դրա ստացման ամսաթիվը:

(122.1-ին կետը լրաց, 03.12.15 N 1427-Ն)

122.2. Կենտրոնը մասնակցից և (կամ) պատվիրատուից ստացված տեղեկատվությունն ուսումնասիրում է այն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում, որը, անհրաժեշտության դեպքում, կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն աշխատանքային օրով՝ կենտրոնի պետի որոշմամբ: Ընդ որում, եթե սույն կարգի 122.1-ին կետով սահմանված ժամկետում տվյալ մասնակիցը և (կամ) պատվիրատուն չի ներկայացնում նույն կետով պահանջվող տեղեկատվությունը, ապա կենտրոնն առկա նյութերն ուսումնասիրում է սույն կարգի 122.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու գործընթացի շրջանակներում մասնակցի կողմից Գնումների բողոքարկման խորհուրդ է ներկայացվում բողոք, ապա կենտրոնի կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի ուսումնասիրման գործընթացը կասեցվում է՝ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

(122.2-րդ կետը լրաց. 03.12.15 N 1427-Ն)

122.3. Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր մարմինները և տարածքային կառավարման մարմինները, պետության հիմնարկները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու գործընթացի շրջանակներում կենտրոնից հարցում ստանալու դեպքում կենտրոն են ներկայացնում գրավոր դիրքորոշում՝ կենտրոնի գրությունն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(122.3-րդ կետը լրաց. 03.12.15 N 1427-Ն)

123. Եթե ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու համար չկան բավարար հիմքեր, ապա կենտրոնը սույն կարգի 122.2-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու հիմքերի բացակայության

վերաբերյալ գրավոր եզրակացություն և ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, իսկ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու համար հիմքերի առկայության դեպքում՝ կենտրոնը սույն կարգի 122.2-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է բողոքարկման գործընթաց:

(123-րդ կետը խմբ. 03.12.15 N 1427-Ն)

124. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նաատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին.

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:

125. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝

1) 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման

դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամարատասխանող.

2) 6 ամսվանից մինչև մեկ տարի ժամկետով՝

ա. եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ տուժանքը, հաշվարկված վնասը, տույժը կամ տուգանքը վերականգնվել է,

բ. եթե օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ ընդունվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

գ. եթե որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց.

3) մեկ տարվանից մինչև մեկ տարի 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի հնգապատիկը, սակայն չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ տուժանքը, հաշվերկված վնասը, տույժը կամ տուգանքը վերականգնվել է.

4) մեկ տարի 6 ամսվանից մինչև 3 տարի ժամկետուվ, եթե մասնակցի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարվա ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար.

5) 3 տարի ժամկետով՝

ա. եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասմապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված տուժանքը, հաշվարկված վեասը, տույժը կամ տուգանքը չեն վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը,

բ. եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ՝ բացառությամբ սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքի:

Վերը նշված փաստական հանգամանքների և իրավակարգավորման պայմաններում գտնում եմ, որ ներկայացված բողոքը «Իրատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անհիմն է և սկսված ընթացակարգը ենթակա է դադարեցման»:

«Իրատես» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/04 ընթացակարգի շրջանակներում 10.01.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և հայտնել հետևյալը, որ հայտի փաթեթին կից չի ներկայացվել Հավելված 1.2-ը, բայց ժամկետում ուղարկվել է Անահիտ Ասատրյանի էլեկտրոնային փոստի հասցեով: Նախորդ գնման ընթացակարգին նույնպես պակաս փաստաթղթերը ներկայացվել են այդ կերպ՝ համակարգողի էլեկտրոնային փոստի հասցեով և եղել են ընդունելի, նույնիսկ նշված գնման ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը ճանաչվել է հաղթող: Սակայն, իրենց մոտ անհայտ պատճառներով չի երևացել ուղարկված Հավելված 1.2-ը և Ընկերությունը ծանուցվել է, որ Հավելված 1.2-ը կցված չէ ներկայացված հայտին:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.12.2021թ. թիվ 1/18-2/83976-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Իրատես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 23.12.2021թ-ին կազմակերպությունը ծանուցվել է ներկայացնել հայտի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթերը չեն շտկվել և կարգի 42-րդ կետի համաձայն հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Իրատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում ընթացակարգի փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/04 ընթացակարգի շրջանակներում 10.01.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Իրատես» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իրատես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.2-ը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 23.12.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իրատես» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.01.2022թ. թիվ 26/26-1/21689-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 28.12.2021թ. թիվ 1/18-2/83976-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝

(...)

8.9 ***<u>Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u>*** ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: Սույն պարբերության կիրառման դեպքում կոմիտե ներկայացվող տեղեկատվությունը պետք է առնվազն պարունակի տվյալներ մասնակցի (մասնակիցների) անվանման, հարկ վճարողի հաշվառման համարի և հայտը ներկայացվելու ամիս ամսաթվի և տարեթվի մասին:Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,</u>*** ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Եթե հայտի գնահատման արդյունքում անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա այն համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

(...)

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Իրատես» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իրատես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.2-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 23.12.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Իրատես» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

Անդրադառնալով Ընկերության տնօրենի կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ Հավելված 1.2-ն ուղարկվել է Անահիտ Ասատրյանի էլեկտրոնային փոստի հասցեով սահմանված ժամկետում, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43 ծածկագրով բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման հայտարարությունը և հրավերը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) հրապարակվել է 06.12.2021թ. ժամը 14:56:00-ին:

«ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասին հայտարարության համաձայն՝ սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, մինչև 14.12.2021թ. ժամը 12:30-ը:

Հետևաբար՝ փոփոխված հայտն Ընկերության կողմից նույնպես պետք է ներկայացվեր էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև 14.12.2021թ. ժամը 12:30-ը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Հավելված 1.2-ը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետի լրանալն ուղարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստի հասցեով 14.12.2021թ. ժամը 11:12-ին:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ «Իրատես» ՍՊԸ-ն «ՍՑ-ՆԳ-2022/04» ծածկագրով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ 07.01.2022թ. ներկայացված առարկությամբ վկայակոչել է ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման կետերը, որոնք ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված կարգով և ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել, այսինքն՝ «Իրատես» ՍՊԸ-ն «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/43» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.01.2022թ. թիվ 26/26-1/21689-2021 գրությամբ «Իրատես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**